Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՃՏ 2022. «Վարդաքար ջրամբարի վերականգնման եվ արդիակացման» ծրագրի ստորագրման արարողություն

2022թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի ունեցավ 113,705 ԱՄՆ դոլար արժողությամբ «Վարդաքար ջրամբարի վերականգնման եվ արդիակացման» ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Շիրակի ջրօգտագործողների միության տնօրեն պարոն Խաչատուր Խաչատրյանի միջև: Արարողությանը ներկա էր նաև ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար պարոն Վաչե Տերտերյանը, Ջրային կոմիտեի նախագահ պարոն Վահագն Գևորգյանը:

Ծրագրի նպատակն է ապահովել կայուն ջրային ռեսուրսներ և բարելավել տարածաշրջանում գյուղատնտեսական արտադրողականությունը՝ ջրամբարի վերանորոգման, ինչպես նաև տարածքում արևային մարտկոցների վերազինման միջոցով: Արդյունքում, մոտ 1800 տնային տնտեսություն, ովքեր զբաղվում են այդ տարածքում գյուղատնտեսությամբ, կշահեն ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Պարոն Խաչաղրյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը դեսպան Ֆուկուշիմայի և պարոն Խաչատրյանի միջը

Դեսպան Ֆուկուշիման (ձախից), պարոն Խաչատրյանը (մեջտեղում) և պարոն Տերտերյանը (աջից)